



ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԿՈՒՌՈՂԸ

# ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՅԻՍ 28Ի ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ



Հայ ժողովուրդը խորքով, էութեամբ եւ դոյապայքարներով, ինչպէս նաեւ իր հազարամեայ մշակոյթով, ազատութեան եւ անկախութեան իր հրեղէն դրոշմը դրած է Սարտարապատի դիւցազնամարտի դադափարականին վրայ: Ան, հերոսական զոհողութեանց այն կատարն է, որու ստորոտին՝ մեր գէնքերուն ներքեւ ծնրադիր, խոնարհեցաւ բարբարոս Թուրքը:

Այսպէս ծնունդ առաւ Հայ պետութիւնը եւ 1918 Մայիս 28ին, նոյն խոչալին շուրջ համախմբուած համակ, ժողովուրդին կամքով ստեղծուեցաւ Հայաստանի ազատ ու անկախ առաջին հանրապետութիւնը:

Մեր ազգային պատմութեան մէջ եզական այս սխրագործութեան 51րդ տարեդարձին առթիւ, Արժանթինահայ Համալսարանականներու Միութիւնը կը յայտարարէ. -

Ա. Թէ Բաշ Արարանի, Ղարաքիլիսէի եւ Սարտարապատի մարտադաշտերուն վրայ 1918 Մայիս 28ին մղուած հերոսական ճակատումները, Հայ ժողովուրդին հայրենասիրութեան եւ ազատասիրութեան ճշմարիտ փաստն են, ինչպէս նաեւ անկախութեան համար, անոր աներեր հաւատքին եւ համոզման խօսուն ապացոյցը:

Բ. Թէ 1918 Մայիս 28, թուական մըն է, որու հրահանգիչ ուժով, հայը կը յաջողի իրականութեան վերածել իր կամքը, զոր կ'արտայայտէ Ներխուժող Թուրքին վրայ իր ջախջախիչ յաղթանակներով:

Գ. Թէ 1918 Մայիս 28, վեցդարեան երազներու եւ տենչանքներու օրինական եւ պաշտօնական արտայայտութիւնն է:

Դ. Թէ 1918 Մայիս 28, Հայ պետական կեանքի արշալոյսն է:

Այս թուականը պատմական անփոփոխելի իրողութիւն մըն է որմէ կը ստանայ իր յատուկ իմաստը, ողջ հայութեան համար: